Արձանագրություն N 2

ԿԵԱԿ-16/3-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան 21 մարտի 2016թ.
Ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Լ.Կոստանդյան,
Հանձնաժողովի անդամներ Օ.Ղազարյան
Հանձնաժողովի քարտուղար Է.Գրիգորյան:

I. ԿԵԱԿ-16/3-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով գնային առաջարկների բացման մասին

(Լ.Կոստանդյան)

1. ՀՀ Կառավարության 168-ն որոշմամբ սահմանված կարգով 2016 թվականիմարտի10-ին ծանուցվել են «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3 ծածկագրերով շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր կազմակերպություններին, ինչպես նաև սահմանված կարգով հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:

2. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով գնային առաջարկ 1 ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1.	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 3թ., 11/6 շինություն Հեռ. (091) 439334

Սույն թվականի մարտի 21-ի դրությամբ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ շրջանակային համաձայնագրեր կնքած և տվյալ պահին որպես հնարավոր մասնակից գրանցված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/3 ծածկագրերով շրջանակային համաձայնագրեր կնքած մնացած կազմակերպությունները գնային առաջարկներ չեն ներկայացրել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Ընթացակարգի հայտ պարունակող ծրարի բացման մասին

(Լ.Կոստանդյան)

Նշված կազմակերպության կողմից ներկայացված ծրարը կազմված և ներկայացված է հրավերով սահմանված կարգով:

Մասնակցի կողմից ներկայացված ծրարում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են և կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Մասնակցի կողմից առաջարկած պայմանագրի կատարման գինը հետևյալն է.

ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ

N	Ապրանքի անվանումը	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող գումարը	Պայմանագրի կատարման գումարը
1	Հրավիրատոմս	990000	990000
2	Տոմսագրքույկ	184992	185000
3	Բուկլետ	1890000	1890000
4	Աֆիշա A3	1440000	1440000
5	Աֆիշա A2	1200000	1200000
6	Բաներ	1680000	1680000

3. Գնահատման մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	«Պարմա-Պրինտ» ՍՊԸ	1, 2, 3, 4, 5, 6

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Հարցում կատարելու մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

ԿԵԱԿ-16/3-ՇՀԱՇՁԲ-15/3 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Հ.Հաջի-Հակոբյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել *ԿԵԱԿ-16/3-ՇՀԱՇՁԲ-15/3* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու գնահատման արդյունքների ամփոփման օրը <<Կամերային երաժշտության ազգային կենտրոն>> ՊՈԱԿ , ք.Երևան, Իսպահանյան 1 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:

Հանձնաժողովի

Նախագահ Հ.Հաջի-Հակոբյան

անդամներ Լ.Կոստանդյան

Օ.Ղազարյան

Քարտուղար Է.Գրիգորյան